ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որը լայն ծավալ ընդունեց 1930-ական թվականների առաջին տարիներին, ուղեկցվում էր կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության կողմից իրականացվող բազմակողմանի միջոցառումներով։ Դրանցից էր գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, որը հրապարակվեց 1930 թ.։ Կանոնադրությունը սահմանում էր կոլտնտեսային կյանքի հիմնական սկզբունքները, որոնք կենսագործելու ժամանակ հարկ էր լինում շտապ հարցեր լուծել կոնկրետ կերպով, հաշվի առնելով փորձը և պրակտիկան։ Գյուղատնտեսական արտելի կանոնադրության հիմնական սկզբունքների հետևողական կենսագործումը մեծ նշանակություն ուներ նորաստեղծ կոլտնտեսությունները ամրապնդելու տեսակետից։ Կանոնադրության էական նշանակություն ունեցող հարցերից էին կոլտնտեսականների վարձատրությունը, աշխատանքի կազմակերպումը և այլն։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը կոլտնտեսականների վարձատրության հարցում պաշտպանում էին աշխատանքային սկզբունքը, հաշվի առնելով աշխատանքի քանակը և որակը, այսինքն՝ կոլտնտեսություններում ևս արմատավորվում էր վարձատրության սոցիալիստական սկզբունքը։ Սակայն պրակտիկայում այն իր ճանապարհը հեշտությամբ չէր հարթում։ Հարկ եղավ հաղթահարել «ձախ» հավասարության՝ ըստ շնչի բաժանման տեսակետն ու պրակտիկան, որը տարածված էր նաև Հայաստանի մի շարք կոլտնտեսություններում՝ ընդհուպ մինչև 1931 թ., ինչպես նաև հետագայում։

1930 թ. ապրիլի 13-ի որոշման մեջ միութենական Կենտգործկոմը և Ժողկոմխորհը նշում էին, որ վարձատրության, բերքի ու եկամտի բաշխման հիմքը աշխատանքն է, կոլտնտեսականի աշխատանքային օրերի (աշխօր) քանակը և աշխատանքի որակը։ Արգելվում էր հավասարար-սպառողական (ըստ շնչի) բաշխումը[1]*։ Ելնելով դրանից, հանրապետության կոլտնտկենտրոնը մի շարք հրահանգներ ուղարկեց տեղերը՝ բերքը բաշխելու հարցի մասին*[2]*։ 1930 թ. հոկտեմբերին իր զեկուցումներից մեկում ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը նշում էր, որ չնայած գոյություն ունեցող որոշումներին, այնուամենայնիվ, հանրապետության կոլտնտեսությունների զգալի մասը բերքը բա-*

---

1 «Մաճկալ», 9. VIII. 1930։

2 «Խորհրդային Հայաստան», 21. IX, 15. X. 1930։

ժանելիս խախտել է կոլտնտեսային շինարարության հիմնական (աշխատանքային) կարգը։ Գյուղի կոմունիստների մի մասը ևս պահանջում էր բերքը բաժանել հավասար, ըստ շնչերի, ղրանով իսկ խրախուսելով պորտաբուծությունը[3]։

Աշխատանքի կազմակերպման մյուս թերությունը այն առանձին դեպքերում դրամաչափով գնահատելն էր։ Չէր կիրառվում գործարքային սիստեմը, չէին մշակվել արտադրական նորմաներ, թերագնահատվել էին սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը[4]։ Այս բոլորը բացասաբար էին ազդում աշխատանքային կարգապահության և աշխատանքի արտադրողականության վրա, հակասում էին նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքին, իսկ դրամական ցուցանիշներով աշխատանքի գնահատումը շատ դեպքերում հանգեցրել էր նրան, որ տարեվերջին կոլտնտեսությունները ոչինչ չէին ունեցել իրենց անդամներին բաշխելու համար։ Այս թերությունները և սխալներն ուղղելու նպատակով հանրապետության կոլտնտկենտրոնը 1931 թ. փետրվարին հատուկ հրահանգով պարզաբանեց կոլտնտեսություններում աշխատանքը կազմակերպելու, այն գնահատելու և հաշվառելու հարցերը[5]։

Վարձատրության աշխատանքային սկզբունքի հաղթանակը և «ձախ» հավասարության լրիվ հաղթահարումը կոլտնտեսային շարժման հետագա զարգացման և ամուր կոլտնտեսությունների ստեղծման կարևոր գրավականն էին։

Կոլտնտեսությունների ամրապնդման և գյուղատնտեսության կոլեկտիվացումը զարգացնելու գործում կարևոր նշանակություն ունեցան 1931 թ. մարտին կայացած սովետների համամիութենական VI համագումարի որոշումները։ Ի կատարումն այդ դիրեկտիվների, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. ապրիլի 11-ին որոշում ընդունեց կոլտնտեսություններում գործարքային սկզբունքին անցնելու ընթացքի մասին։ Կենտկոմը մոբիլիզացրեց տասնյակ ղեկավար աշխատողների, որոնք օգնեցին տեղական կազմակերպություններին՝ ավարտելու անցումը նոր կարգին, ինչպես նաև կոլտնտեսային մասսաներին պրոպագանդելու սովետների համամիութենական VI համագումարի որոշումները[6]։ Միութենական հողժողկոմատի և կոլտնտկենտրոնի որոշումով սահմանվեց բոլոր կոլտնտեսականներին աշխատանքային գրքույկներով ապահովելու և նրանց աշխատանքի արդյունքները պարբերաբար գրանցում գրանցելու ընդհանուր կարգը[7]։

Մինչև 1931 թ. նոյեմբերի 1-ը գործարքը կիրառվում էր հանրապետության կոլտնտեսությունների 84%-ի կողմից։ Կոլտնտեսականներին աշխատանքային գրքույկներ էին բաժանվել 800 կոլտնտեսություններում (այդ ժամանակ հանրապետությունում կար ընդամենը 893 կոլտնտեսություն), իսկ գրքույկներում գրանցում էին անում 705 կոլտնտեսություններ[8]։ Դրա շնորհիվ, ինչպես ասված էր ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1931 թ. հոկտեմբերի 17-ի որոշման մեջ, բարձրացան աշխատանքի արտադրողականությունը և կարդապահու-

---

3 «Մաճկալ», 16. X. 1930։

4 «Խորհրդային Հայաստան», 21. II. 1931։

5 Նույն տեղում։

6 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԱ), ֆ. 1, ց. 17, գ. 9, թ. 277։

7 «Մաճկալ», 4. VI. 1931։

8 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 166, թ. 86—88։

թյունը։ Սակայն առանձին շրջաններ (Ապարան, Մարտունի, Բասարգեչար (Վարդենիս), Աղբարա (Ամասիա, Ղուկասյան), Վեգի (Արարատ) անբավարար էին կիրառում գործարքը։ Երբեմն կրկնվում էր եկամուտը ըստ շնչի բաժանելու սխալը։ Այդ թերությունները վերացնելու համար Ժողկոմխորհը մշակեց նոր միջոցառումներ[9], որոնք դրական արդյունք տվեցին։

Կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ նոր միջոցառումներ իրականացվեցին 1932 թ., որոնք ընդհանրապես անցան ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի նշանավոր որոշման («ՀամԿ(բ)Կ Անդրերկոմի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ»)[10] կենսագործման նշանաբանով։ 1931 թ. Հայաստանում, ինչպես նաև Վրաստանում ու Ադրբեջանում գյուղացիական հարցում թույլ էին տրվել կոպիտ քաղաքական սխալներ, որոնք իրենց արտահայտությունն էին գտել կոլեկտիվացման ստուգիչ թվեր սահմանելու, հարկային և մթերումների գործում ճնշում գործադրելու մեջ։

1932 թ. հունվարի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում կայացրեց մթերող և ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նշված որոշման կատարման ընթացքի մասին[11]։ Նույն թվի փետրվարի 13-ին կոլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպորեն ամրապնդելու հարցին անդրադարձավ ՀՍՍՀ Ժողկոմխորհը[12]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը վերստին խիստ քննադատեց գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիայի (պայմանագրման) և մթերումների բնադավառում ինչպես կոլտնտեսականների, այնպես էլ մենատնտեսների նկատմամբ մի շարք շրջաններում թույլ տրված ծռումներն ու խեղաթյուրումները[13]։ Առանձին կարգով դատապարտվեցին Ստեփանավանի (հատկապես Վորոնցովկա՝ Կալինինո գյուղում), Շամշադինի, Մեղրու և այլ շրջաններում օրինականության խախտումները։

Կոմունիստական կուսակցությունը զարգացրեց և լուծեց կոլտնտեսային շինարարության համար տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք հարցեր, որոնք էական դեր էին խաղալու կոլտնտեսությունների ամրապնդման և կոլեկտիվացման հետագա վերելքի ապահովման գործում։ 1932 թ. փետրվարի 4-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման հերթական խնդիրների մասին[14]։ Կուսակցությունը կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման հիմնական օղակ համարեց կոլտնտեսականների մշտական կազմ ունեցող բրիգադը, որի արտադրական հաջողություններով էր պայմանավորված կոլտնտեսականի աշխօրի գնահատումը։ Հողը, ինչպես նաև արտադրության մյուս միջոցները բրիգադին ամրացվում էին ամբողջ գյուղատնտեսական սեզոնի կամ աշխատանքային այս կամ այն գործունեության (հերկ, բերքահավաք և այլն) ժամա-

---

9 «ՀՍՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1931, № 4, հոդված 284։

10 Տե՛ս «Գործի վերածենք լենինյան շտաբի հոկտեմբերի 31-ի որոշումը (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշումը և ՀամԿ(բ)Կ Անդրերկոմի ու ՀԿ(բ)Կ ԿԿ որոշումներն այդ որոշումը կիրառելու միջոցների մասին)», Երևան, 1932։

11 «Խորհրդային Հայաստան», 14. I. 1932։

12 «ՀՍՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1932, № 1, հոդված 29։

13 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 119։

14 «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и советского правительства. 1927—1935», М., 1957, стр. 409—410. «Խորհրդային Հայաստան», 8. II. 1932։

նակաշրջանի համար։ Կենտկոմը նշում էր, որ կոլտնտեսային շինարարության կարևորագույն խնդիրը շարունակում է մնալ սովետների համամիութենական VI համագումարի որոշման կենսագործումը, այն է՝ կոլտնտեսություններում գործավարձը արմատավորելը, հաշվառումը բարելավելը և յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքը աշխօրերով (ըստ նրա կատարած գործի քանակի ու որակի) գնահատելը։

Ամփոփելով կուսակցության առաջադրանքների կատարման նախնական արդյունքները, ՀԿ(բ)Կ Կենտկոմը արձանագրեց, որ այն հիմնականում ընթանում է բավարար (Սարդարապատի (Հոկտեմբեր), Համամլուի (Սպիտակ) և այլ կոլտնտեսություններում), սակայն առանձին շրջաններում այդ հարցը դեռևս չէր դարձել կուսակցական, սովետական և կոլտնտեսային կազմակերպությունների ուշադրության հիմնական առարկա։ Շատ շրջաններում բրիգադները կազմակերպվում էին կոլտնտեսականների մեխանիկական բաժանումով, երբեմն արտադրական սկզբունքի փոխարեն հիմք էր ընդունվում տերիտորիալ-ազգակցական սկզբունքը։ Բրիգադին փոխարինում էին օղակները (6—8 մարդու կազմով), իսկ այլ դեպքերում տարվել էին խոշոր բրիգադների կազմակերպումով (80—90 մարդ)։ Արտադրական տեղամասերը, գյուղատնտեսական գույքը և քաշող ուժը չէին ամրացվել բրիգադներին։ Առանձին դեպքերում անբավարար էր պրոպագանդվում բրիգադավարի դերը, որպես կոլտնտեսային արտադրության կենտրոնական դեմքի։ Ըստ բրիգադների ճիշտ չէին տեղաբաշխվում կոմունիստների և կոմերիտականների ուժերը, թերագնահատվում էր կանանց աշխատանքը։ Թերություններ գոյություն ունեին աշխատանքային կատեգորիաների և արտադրական նորմաների որոշման գործում։ Թույլ էին տրվում վարչական մեծ ծախսեր։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը մանրամասն միջոցառումներ մշակեց հիշյալ թերությունները վերացնելու և կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպումը ըստ կուսակցության դիրեկտիվների արմատավորելու և ամրապնդելու համար[15]։

Մինչև 1932 թ. հունիսի 15-ը Հայաստանի կոլտնտեսություններում կազմակերպվել էր 2982 բրիգադ։ Աշխատող կոլտնտեսականների թիվը բարձրացել էր 80—90%-ի, նախորդ տարվա 30—50%-ի դիմաց։ Աշխատանքային կազմակերպվածության տեսակետից աչքի էին ընկնում Սարդարապատի, Համզաշիմանի, Համամլուի, Ստեփանավանի, Կուրթանի, Ուռուտի և այլ կոլտնտեսություններ, որոնց փորձը դարձել էր օրինակելի[16]։

Հաշվի առնելով գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ խախտման փաստերը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1932 թ. մարտի 26-ին ընդունեց «Անասունների հարկադիր հանրայնացման մասին» որոշումը[17], որտեղ ամենավճռական կերպով շեշտվում էր, որ «միայն կոլտնտեսությունների թշնամիները կարող են թույլ տալ առանձին կոլտնտեսականների կովերի ու մանր անասունների հարկադրական հանրայնացում», որ նման պրակտիկան ոչ մի առնչություն չունի կուսակցության քաղաքականության հետ։ Կոմունիստական կուսակցությունը իր խնդիրն էր համարում, որպեսզի յուրաքանչյուր

15 «Խորհրդային Հայաստան», 22. IV. 1932, ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 157—159։

16 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 32, թ. 12—18 և գ. 184, թ. 11—17։

17 «Коллективизация сельского хозяйства», стр. 410—411, «Խորհրդային Հայաստան», 28. III. 1932։

կոլտնտեսական ունենա իր կովը, մանր անասունները և թռչունները։ Կենտկոմը կուսակցական, սովետական և կոլտնտեսային կազմակերպություններից պահանջում էր վերացնել կոլտնտեսականների կովերի ու մանր անասունների հարկադիր հանրայնացման բոլոր փորձերը, իսկ կուսակցության դիրեկտիվները խախտողներին վտարել կուսակցությունից։ Միաժամանակ առաջարկվում էր օգնություն և աջակցություն կազմակերպել, որպեսզի չունեցողները ձեռք բերեին կով և մանր անասուններ։

Անասունների հարկադիր հանրայնացման փաստեր տեղի էին ունեցել նաև Հայաստանում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը տեղական կազմակերպություններից պահանջեց անմիջապես անցնել սխալների ուղղմանը և վերադարձնել հարկադրաբար հանրայնացված կովերն ու մանր անասունները[18]։ Նորից անդրադառնալով այդ հարցին, ՀԿ(բ)Կ Կենտկոմը նշեց, որ կուսակցության դիրեկտիվները դեռևս անբավարար են կենսագործվում Ղափանի, Մեղրու, Ղարաքիլիսայի (Կիրովականի, այժմ Գուգարքի), Ստեփանավանի, Բասարգեչարի, Մարտունու, Թալինի և այլ շրջաններում։ Ցուցում տրվեց արագ և կազմակերպված ձևով կոլտնտեսականներին վերադարձնել նրանցից վերցված տնամերձ հողամասերը, այգիներն ու բանջարանոցները[19]։ Կենտկոմը առանձին որոշում ընդունեց Ղափանի շրջանի Վաչագան և Բազաբուրջ գյուղերի կոլտնտեսությունների մասին, որտեղ նույնպես տեղի էին ունեցել գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ խախտումներ (մանր անասունների և տնամերձ այգիների հարկադիր հանրայնացում)[20]։ ՀՍՍՀ Հողժողկոմատը և կոլտնտկենտրոնը կոնկրետ միջոցառումներ ձեռնարկեցին կուսակցական դիրեկտիվները կենսագործելու համար[21]։ Մինչև 1932 թ. հուլիսը կոլտնտեսականներին վերադարձվեց 28 հազար գլուխ ոչխար և 2200 գլուխ կով[22]։

Կոլտնտեսականների անասունների հարկադիր հանրայնացումը այն մտայնության արտահայտությունն էր, թե իբր նրանք չպետք է ունենան անձնական օժանդակ տնտեսություն, և փաստորեն դա այդ տնտեսությունը վերացնելու փորձ էր։ Կուսակցությունը մերժեց այդ տեսակետը և պաշտպանեց այն սկզբունքը, որ գյուղատնտեսական արտելի հետ միասին օժանդակ տնտեսությունը կոլտնտեսականների նյութական կարիքները բավարարելու կարևոր աղբյուր է։ Ինչպես կոլտնտեսային շարժման սկզբնական շրջանում, այնպես էլ այժմ անձնական օժանդակ տնտեսությունը կոլտնտեսականին և քաղաքի բնակչությանը մատակարարում է անասնաբուծական մթերքներ, բանջարեղեն, պտուղ և միրգ։

1932 թ. հուլիսին կայացավ կոլտնտեսային աշխատողների հանրապետական խորհրդակցություն, որտեղ լսվեց կոլտնտկենտրոնի նախագահ Հ. Սիլանյանի զեկուցումը կոլտնտեսությունների ամրապնդման ընթացքի և կոլտնտեսային շինարարության խնդիրների մասին։ Խորհրդակցությունում ճառով հանդես եկավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը[23]։ Սեպտեմբերին կայացավ կուսշրջկոմների քարտուղարների խորհրդակցու-

---

18 «Խորհրդային Հայաստան», 30. III. 1932, Մլի ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 177—178։
19 «Խորհրդային Հայաստան», 28. V. 1932, Մլի ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 118—119։
20 «Խորհրդային Հայաստան», 28. V. 1932, Մլի ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 119—120։
21 «Խորհրդային Հայաստան», 29. V. 1932։
22 Նույն տեղում, 26. VII. 1932։
23 Նույն տեղում, 18, 20, 22. VII. 1932։

թյուն, որտեղ քննարկվեցին կոլտնտեսությունների կազմակերպական-քաղաքական և տնտեսական ամրապնդման հերթական խնդիրները (զեկուցող՝ Ա. Խանջյան), գյուղում հեղափոխական օրինականության ամրապնդման միջոցառումների և տնտեսական-քաղաքական կամպանիաների ընթացքի մասին զեկուցումները։ Խորհրդակցությունն ընդունեց կոլտնտեսային շինարարության մոտակա խնդիրների մասին բանաձև, որն այնուհետև հաստատվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից[24]։

Կոլտնտեսությունների ամրապնդման նպատակին էր անմիջապես ուղղված նրանց զտումը դասակարգային խորթ տարրերից։ Կուլակային-դաշնակցական տարրերը պարտություն կրելով և ջախջախվելով բացահայտ դասակարգային պայքարում, փոխեցին իրենց պայքարի տակտիկան։ Ձանազան ճանապարհներով թափանցելով կոլտնտեսությունները, նրանք կանգնեցին դրանք ներսից քայքայելու և կոլտնտեսային կարգերի դեմ քողարկված ձևով պայքարելու ուղու վրա։ 1932 թ. ընթացքում իրականացվեցին կոլտնտեսությունները սոցիալապես խորթ անձանցից մաքրելու որոշ միջոցառումներ։ Ընդ որում, զտման ժամանակ տեղի ունեցավ նաև կոլտնտեսականների որոշ մաղում և, ընդհանրապես, 1932 թ. կոլտնտեսային շարժումը քանակապես չաճեց։ Ամբողջ 1932 թ. անցավ հիմնականում կոլտնտեսությունների ամրապնդման նշանաբանով։

Ուժեղ զտում և մաղում տեղի ունեցավ Բասարգեչարի շրջանում, որտեղ նախորդ տարում կոլեկտիվացումը զարգացել էր մեծ հաջողությամբ և այդ ընթացքում կոլտնտեսություն էին մտել նաև կուլակային տնտեսություններ։ Ինչպես 1932 թ. նշեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովը, կոլեկտիվացման մակընթացությունը չզեկավարելու պատճառով հիշյալ շրջանում զգալի թվով (մինչև 100) կուլակային-ունևոր և այլ հակասովետական տարրեր էին խցկվել կոլտնտեսությունները, և շուտով նրանք հեռացվեցին այնտեղից։ Միաժամանակ հանձնաժողովն արձանագրեց, որ տվյալ շրջանում թույլ տրված սխալների և կոլտնտեսությունները ամրապնդելու անբավարար աշխատանքի պայմաններում դասակարգային թշնամուն հաջողվել է իր ետևից տանել շրջանի հետամնաց աշխատավոր տնտեսությունների մի մասին, որի հետևանքով 1932 թ. երկու ամսվա ընթացքում շրջանում կոլտնտեսություններից հեռացել է մոտ 800 տնտեսություն[25]։ Մաղման դեպքեր տեղի ունեցան նաև Վաղարշապատի (Էջմիածին), Մարտունու, Ստեփանավանի, Դիլիջանի, Քեշիշքենդի (Եղեգնաձոր) և այլ շրջաններում (գլխավորապես 1931 թ. դեկտեմբեր—1932 թ. փետրվար և 1932 թ. հունիս ամիսներին)։ Նշենք, որ մաղում կատարվեց հիմնականում այն շրջաններում կամ գյուղերում, ուր 1931 թ. թույլ էր տրվել կոլեկտիվացման դեկրետավորում[26]։

1932 թ. հունվարից մինչև հոկտեմբեր Ղուրդուղուլիի (Հոկտեմբերյան) շրջանում կոլտնտեսություններից զտվեց 112, իսկ Շամշադինի շրջանում՝ 38 տնտեսություն[27]։ Շամշադինի շրջանի Նորաշեն, Նավուր, Ջինչին, Մոսեսգեղ, Թովուզղալա (Բերդ) գյուղերի կոլտնտեսություններն էին խցկվել շրջանի 1930 թ. կուլակային խռովությանը մասնակցած գյուղացիներ, որոնք քայ-

24 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 28—31։
25 Նույն տեղում, ց. 17, գ. 144, թ. 50—54։
26 Նույն տեղում, ֆ. 1, ց. 19, գ. 32, թ. 12—18։
27 Նույն տեղում, ֆ. 90, ց. 1, գ. 145, թ. 81, և ֆ. 1, ց. 19, գ. 184, թ. 19—21։

քայլիչ աշխատանք էին տանում[28]։ Թշնամական տարրերը կոլտնտեսություններ էին թափանցել Ալավերդու շրջանի Ճոճկան, Շնող, Բարանա (Նոյեմբերյան), Կողբ, Աղբաբայի շրջանի Սուլթանաբադ (Շուրարադ), Քոռաղբյուր, Ղարաքիլիսայի շրջանի Յաղուբլու (Մեղրուտ), Համամլու, Ղուրսալի, Ստեփանավանի շրջանի Ստեփանավան, Շահնազար, Թալինի շրջանի Սաբունչի և հանրապետության այլ գյուղերում[29]։ Կոլտնտեսությունների ստեղծումը և զտումը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Միայն 1932 թ. կոլտնտեսություններից զտվեց 1300 կուլակային և ենթակուլակային տնտեսություն, իսկ մաղված տնտեսությունների ընդհանուր թիվը հասավ 7800-ի։ Դրա փոխարեն նույն ժամանակամիջոցում կոլտնտեսություն էին ընդունվել 2200 նոր տնտեսություններ[30]։ Քանակական տեսակետից զտման, ինչպես նաև մաղման հետևանքը եղավ այն, որ հանրապետությունում կոլեկտիվացումը 1932 թ. հունվարի 1-ի 39,9%-ից 1932 թ. սեպտեմբերի 1-ին իջավ 36,9%-ի[31], իսկ մինչև տարեվերջ այն փաստորեն պահպանվեց նույն մակարդակի վրա (1933 թ. հունվարի 1-ին կոլեկտիվացումը կազմում էր 37,0%)[32]։

Կոլտնտեսությունների ամրապնդման միջոցառումներից էր նաև կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության պաշտպանության ուժեղացումը։ Կոլտնտեսային կարգի զարգացման հետ միասին հաճախացան կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության, ինչպես նաև տրանսպորտով փոխադրվող բեռների հափշտակության (գողության) դեպքերը։ Ընդառաջելով այդ կապակցությամբ բանվորների և կոլտնտեսականների բողոքներին, ՍՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1932 թ. օգոստոսի 7-ին ընդունեցին «Պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու կոոպերացիայի գույքը պաշտպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունը ամրապնդելու մասին» որոշումը[33]։ Այդ որոշումը դատական խիստ պատիժ էր նախատեսում այն կուլակների և հակահասարակական տարրերի նկատմամբ, ովքեր բռնություն և ահաբեկում էին գործադրում կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նկատմամբ։ Այս բավականին խիստ որոշումը կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային սեփականությունը դասակարգային թշնամիներից, գողերից ու հափշտակիչներից պաշտպանելու գործում։

Հանրապետության գերագույն դատարանի տվյալներով մինչև 1933 թ. օգոստոսը գողության և տարբեր հանցանքների համար դատական պատասխանատվության էին ենթարկվել որոշ թվով մարդիկ, որոնց ճնշող մեծամասնությունը նախկին կուլակներ, ենթակուլակներ, առևտրականներ և այլ խորթ տարրեր էին[34]։

Նշված միջոցառումներով, իհարկե, չի սպառվում այն բազմակողմանի գործունեությունը, որ իրականացրին կոմունիստական կուսակցությունը և

28 Նույն տեղում, ֆ. 1, ց. 17, գ. 10, թ. 437—440։

29 Նույն տեղում։

30 «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն։ 1934 թ. 10—13 հունվարի», Երևան, 1935, էջ 71։

31 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 174, թ. 6։

32 Նույն տեղում, ց. 25, գ. 278, թ. 42։

33 «ԽՍՀՄ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1932, № 62, հոդված 360։

34 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 6. VIII. 1933։

սովետական կառավարությունը գյուղում սոցիալիստական կարգը ամրապնդելու ընդգավառում։ Բայց ասվածն էլ բավական է եզրակացնելու, որ կոլտնտեսությունների ամրապնդումը եղել է գյուղատնտեսության կոլեկտիվացման անխզելի մասը և կարևոր տեղ է գրավել կուսակցության և կառավարության քաղաքականության մեջ։

1929—1932 թթ. կոլտնտեսային շինարարության բուռն վերելքը, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության՝ որպես դասակարգի, վերացումը հանգեցրին կոլտնտեսային կարգի հաղթանակին։ Այդ տարիները ամբողջ ճակատով (ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում) սոցիալիզմի ծավալուն հարձակման ժամանակաշրջան էին։ Հիմնականում գրաղվելով լենինյան կոոպերատիվ պլանի հաղթանակը ապահովելու, գյուղի սոցիալիստական վերակառուցումը լայնությամբ զարգացնելու հարցերով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ աշխատանք կատարեցին նաև կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ։ Դա կարևոր նշանակություն ուներ կոլտնտեսային կարգի հեղինակությունը բարձրացնելու, նրա առավելությունները գործնականորեն ցուցադրելու, հետևաբար՝ գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումը նախապատրաստելու տեսակետից։

1930—1932 թթ. (նախքան քաղաժիններին կազմակերպումը) կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ ձեռք բերվեցին միայն առաջին հաջողությունները։ Այդ նվաճումները և կուտակված փորձը կարևոր դեր էին խաղալու պատմական զարգացման հաջորդ շրջանում՝ մշակելու կոլտնտեսությունների ամրապնդման նոր միջոցառումներ և հաջողությամբ պայքարելու դրանք կենսագործելու, գյուղում սոցիալիզմի կառուցումն ավարտելու համար։

ПЕРВЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО УКРЕПЛЕНИЮ КОЛХОЗОВ В АРМЕНИИ

ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

Резюме

В начале 30-ых гг. Коммунистическая партия и советское правительство большое внимание уделяли вопросам укрепления колхозов. В этом плане в 1930—1932 гг. (до создания политотделов при МТС) в Армении была проведена большая работа.

С преодолением практики «левой» уравниловки, имевшей место в ряде колхозов, был прочно утвержден трудовой—социалистический принцип (трудодень) в распределении доходов. Такой принцип сочетался со сдельщиной. Был внесен порядок периодической регистрации результатов работы в трудовой книжке колхозника. Бригада была признана основной формой организации труда. В июне 1932 г. в колхозах республики насчитывалось около 3 тысяч бригад. Большую роль сыграла чистка, в результате которой за 1932 г. из колхозов было исключено 1300 кулацких и других чуждых элементов. Эти и другие мероприятия способствовали организационно-политическому укреплению колхозов.